ՏՈ՛ՒՐ ՁԵՌԴ, ԵՂԲԱ՛ՅՐ...

Տո՛ւր ձեռդ, եղբա՛յր, այս սեւ օրերին
Միացած ոյժով յառա՛ջ ընթանանք.
Դէն հալածելով ամպերը մթին՝
Մայր լուսոյ ճամբան միասին քանանք...

Եղբա՛յր իմ սիրած, մենք զատ-զատ կեանքում
Ա՜հ, շա՜տ կրեցինք անարգանք ու վիշտ.
Իսկ այսօր ահա՛ մենք տխո՜ւր, տրտո՜ւմ...
Երկուսիս առաջ տեսնում ենք չարիք...

Տո՛ւր ձեռդ, եղբայր, չէ՞ որ եղբայր ենք.
Ձեռք տո՛ւր միասին քայլենք դէպ յառա՛ջ.
Արի՛ սեւ ոյժեր կորցնենք ու ցընդենք,
Եղբայր մենք դառնանք, եղբայր սրտաբաց...

Այդ պահանջում է մեր վեհ նպատակ.
Այդ պահանջում է մեր թշուա՛ռ ներկան.
Թո՛ղ հնչէ՛ մեր մէջ սիրոյ վեհ նըւագ.
Սէ՛րը կրծընէ ոսկի՛ ապագան...

Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆ